ՊԵՏԱԿԱՆ ԳՈՒՅՔԻ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ԿՈՄԻՏԵ
ՆԱԽԱԳԱՀ

ՀՐԱՄԱՆ

№ 302-Ա «26» 06 2025թ. ք.Երևան

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի օգոստոսի 2-ի «Առանձին խնդիրների իրականացման համար պետական մարմինների կողմից փորձագետի ներգրավման կարգը և դեպքերը սահմանելու մասին» № 878-Ն որոշմամբ հաստատված կարգի 2-րդ և 7-րդ կետերով և Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 2020 թվականի ապրիլի 27-ի «Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարության պետական գույքի կառավարման կոմիտեի կանոնադրությունը հաստատելու մասին» № 30-Լ հրամանով հաստատված Հավելվածի 19-րդ կետի 11-րդ ենթակետով.

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

Հաստատել փորձագետի կողմից իրականացվող աշխատանքների ծրագիրը համաձայն հավելվածի:

26.06.2025

X

Signed by: AVETISYAN ARNAK 1701920336 ԱՌՆԱԿ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Հավելված

Պետական գույքի կառավարման կոմիտեի նախագահի
2025 թվականի հունիսի 26-ի № 302-Ա հրամանի

ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԾՐԱԳԻՐ

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԿՈՂՄԻՑ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ

1. Ներգրավման դեպքը և հիմնավորումները

Պետական գույքի կառավարման կոմիտեի (այսուհետ՝ Կոմիտե) քարտուղարության արտաքին կապերի և ինֆորմատիկայի բաժնում՝ Կոմիտեի կանոնադրական խնդիրներից բխող կոնկրետ հանձնարարականների իրականացման համար (մասնավորապես՝ Կոմիտեի www.stateproperty.am պաշտոնական կայքի տեխնիկական սպասարկման և ծրագրային ապահովման աշխատանքների իրականացման, Կայքի անխափան աշխատանքի ապահովման, էլեկտրոնային աճուրդների անցկացման (հասցե՝ www.e-auctions.am), ինչպես նաև պետական գույքի հաշվառման ավտոմատացված ու ամբողջական համակարգերի ընթացիկ տեխնիկական սպասարկում և այլն) իրականացման համար նպատակահարմար է ներգրավել համապատասխան մասնագետ (փորձագետ):

2. Փորձագետին ներկայացվող պահանջները

1) բարձրագույն կրթություն, տեղեկատվական համակարգերի ոլորտում առնվազն երկու տարվա աշխատանքային փորձ,

2) «Տեղեկատվության ազատության մասին», «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին», «Կառավարության կառուցվածքի և գործունեության մասին», «Պետական կառավարման համակարգի մարմինների մասին» ՀՀ օրենքների անհրաժեշտ իմացություն,

3) տրամաբանելու, տարբեր իրավիճակներում արագ կողմնորոշվելու ունակություն,

4) ծրագրային և համակարգային անսարքությունների վերացման ունակություն,

5) կազմակերպչական և վերջնաժամկետներում առաջադրանքների կատարման հմտությունների տիրապետում,

6) արդյունավետ հաղորդակցման և պլանավորման հմտությունների տիրապետում,

7) հարմարվողականություն/ճկունություն, խնդիրների լուծման հմտություններ

8) HTML5, CSS3 և responsive դիզայնի իմացություն

9) աշխատանքային փորձ framework-ների հետ (Bootstrap, Foundation)

10) նախապրոցեսորների հետ աշխատելու ունակություն (Sass, Less)

11) SEO սկզբունքների և կատարողականության իմացություն:

3. Աշխատանքների իրականացման ժամանակահատվածը

Փորձագետը ներգրավվում է մինչև 7 ամիս ժամկետով:

4. Աշխատանքների ակնկալվող արդյունքը

1) Փորձագետը յոթ ամսվա ընթացքում իրականացնելու է ծրագրով նախատեսված աշխատանքները, մասնավորապես՝

ա. Կոմիտեի էլեկտրոնային աճուրդի պաշտոնական կայքի (e-auctions.am) (այսուհետ՝ Կայքի) HTML5, CSS3-ի միջոցով ինտերֆեյսների դասավորություն (верстка) և օպտիմալացում,

բ. ադապտիվ և խաչաձև բրաուզերների լուծումների մշակում՝ ապահովում կայքերի և հավելվածների ճիշտ աշխատանքը տարբեր սարքերում և զննարկիչներում,

գ. էջերի օպտիմալացում՝ բեռնման արագությունը բարելավելու համար,

դ. ծրագրային փաթեթի ֆունկցիոնալի սպասարկում (front end), անխափան հասանելիության ապահովում,

ե. Կայքի դիզայնի արդիականացում, անհրաժեշտության դեպքում՝ փոփոխություն,

զ. տրվող լուծումների ու տեխնոլոգիաների արդիականացման ապահովում,

է. Կայքի FrontEnd միջավայրի աշխատանքի ընթացիկ խափանումների վերաբերյալ մեկ ժամվա ընթացքում արձագանքում,

ը. Կայքի FrontEnd միջավայրի աշխատանքի ընթացիկ խափանումների, թերությունների և բացթողումների շտկում,

թ. Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալների ուղղում,

ժ. Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքի փոփոխություններ, ինչպես նաև բաժինների ծրագրային թարմացում,

ժա. Կայքի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմի տեխնիկական աջակցության իրականացում,

ժբ. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև սխալների վերացում,

ժգ. արձանագրված և/կամ փորձագետի կողմից հայտնաբերված և հրատապ լուծում պահանջող գործընթացի իրականացում, այդ թվում՝ ծրագրային ապահովման կարգաբերում, վնասված հատվածների կամ ամբողջականության վերականգնում,

ժդ. անավարտ կամ թերի իրագործված հատվածների դուրս բերում,

ժե. Կայքի ծրագրային ապահովման ընթացիկ լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն,

ժզ. Կայքի նոր գործողություններ կատարելու անհրաժեշտությունից բխող դրա ծրագրային ապահովման մեջ փոփոխությունների կատարում,

ժէ. Կայքի ֆունկցիոնալի վերափոխումների ու լրացումների իրականացում,

ժը. Կայքի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ թարմացումների և նորացումների տեղադրում. անհրաժեշտության դեպքում՝ տվյալների տեսակներին համապատասխան Կայքի տվյալների շտեմարանների կառուցվածքներում փոփոխությունների և (կամ) լրացումների կատարում,

ժթ. Կայքի ծրագրային ապահովման մեջ յուրաքանչյուր լրամշակում, կառուցվածքային կատարելագործում և փոփոխություն, այդ թվում՝ դրանց խմբերը, կատարելու ավարտի Կայքի ամբողջական փորձարկում,

ի. Կոմիտեի անձնակազմին տեխնիկական աջակցության ապահովում, ինչպես նաև Կայքից օգտվող պետական մարմինների ու կազմակերպությունների աշխատակիցների՝ կայքից գրագետ օգտվելու պահանջների ու պայմանների տեսական ու գործնական ուսուցում,

իա. քարտուղարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացում:

2) Փորձագետը պարտավոր է ապահովել Կայքի ու դրա աշխատանքի վերաբերյալ իրեն հայտնի տեղեկատվության գաղտնիությունը:

3) Փորձագետը հանդիսանում է Կայքի ադմինիստրատոր, իրականացում է Կայքի վերահսկումը, ապահովում է դրա անվտանգ աշխատանքը և պատասխանատու է Կայքի անխափան ու անթերի շահագործման համար:

4) Կատարված աշխատանքի արդյունքը գնահատվում է դրական կամ բացասական:

5. Հաշվետվություններ ներկայացնելու ժամկետներ

Փորձագետը 3 ամիսը մեկ ներկայացնում է հաշվետվություն:

6. Աշխատանքի գնահատման չափանիշներ

Աշխատանքը գնահատվում է ըստ փուլերի՝ երեք ամիսը մեկ և վերջին ամսվա համար ներկայացված (ամփոփիչ) հաշվետվությունների հիման վրա, որի արդյունքում երևում է, թե տվյալ ժամանակահատվածում փորձագետն իր առջև դրված խնդիրների ո՞ր մասն է իրականացվել:

Գնահատման համար չափանիշները սահմանվում են ըստ 4-րդ բաժնի «ա»-«իա» ենթակետերով սահմանված արդյունքների:

Համապատասխանաբար, վերջնարդյունքների չափանիշներն են՝

ա. Կոմիտեի էլեկտրոնային աճուրդի պաշտոնական կայքի (e-auctions.am) HTML5, CSS3-ի միջոցով ինտերֆեյսները դասավորված և օպտիմալացված են,

բ. ադապտիվ և խաչաձև բրաուզերների լուծումների մշակում՝ կայքերի և հավելվածների ճիշտ աշխատանքը տարբեր սարքերում և զննարկիչներում ապահովված է,

գ. էջերը օպտիմալացված են՝ բեռնման արագությունը բարելավված է,

դ. ծրագրային փաթեթի ֆունկցիոնալի սպասարկում (FrontEnd), անխափան հասանելիությունն ապահովված է,

ե. Կայքի դիզայնի արդիականացումն իրականացված է,

զ. Տրվող լուծումների ու տեխնոլոգիաների արդիականացման ապահովված է,

է. Կայքի FrontEnd միջավայրի աշխատանքի ընթացիկ խափանումները վերացված է,

ը. Կայքի FrontEnd միջավայրի աշխատանքի ընթացիկ խափանումների, թերությունների և բացթողումների շտկումներն իրականացված են,

թ. Կայքի սպասարկման ժամանակ հայտնաբերված սխալներն ուղղված են,

ժ. Կայքի կառուցվածքային և արտաքին տեսքը փոփոխված է, ինչպես նաև բաժինների ծրագրային թարմացումն իրականացված է,

ժա. Կայքի հետ աշխատող Կոմիտեի անձնակազմի տեխնիկական աջակցությունն իրականացված է,

ժբ. Կայքում ներդրված էլեկտրոնային ծառայությունների աշխատանքի ընթացքում հայտնաբերված թերությունների, ինչպես նաև սխալների վերացումն իրականացված է,

ժգ. արձանագրված և/կամ փորձագետի կողմից հայտնաբերված և հրատապ լուծում պահանջող գործընթացն իրականացված է, այդ թվում՝ ծրագրային ապահովման կարգաբերումն, վնասված հատվածների կամ ամբողջականության վերականգնումն,

ժդ. անավարտ կամ թերի իրագործված հատվածները դուրս են բերված,

ժե. Կայքի ծրագրային ապահովման ընթացկում լրամշակված է, իրականացված է Կայքի կառուցվածքային կատարելագործման փոփոխություն,

ժզ. Կայքի նոր գործողություններ կատարելու անհրաժեշտությունից բխող դրա ծրագրային ապահովման մեջ փոփոխությունները կատարված է,

ժէ. Կայքի ֆունկցիոնալի վերափոխումներն ու լրացումներն իրականացված է,

ժը. Կայքի անխափան աշխատանքի համար անհրաժեշտ բոլոր ընթացիկ թարմացումների և նորացումների տեղադրում. անհրաժեշտության դեպքում՝ տվյալների տեսակներին համապատասխան Կայքի տվյալների շտեմարանների կառուցվածքներում փոփոխություններն և/կամ լրացումները կատարված են,

ժթ. ավարտված Կայքի ամբողջական փորձարկումն իրականացված է՝ Կայքի ծրագրային ապահովման մեջ յուրաքանչյուրը լրամշակված է, կառուցվածքը կատարելագործ և փոփոխված է,

ի. Կոմիտեի անձնակազմին տեխնիկական աջակցությունն ապահովված է, ինչպես նաև Կայքից օգտվող պետական մարմինների ու կազմակերպությունների աշխատակիցների՝ կայքից գրագետ օգտվելու պահանջների ու պայմանների տեսական ու գործնական ուսուցումն իրականացված է,

իա. քարտուղարության կանոնադրական խնդիրներից բխող այլ գործառույթների իրականացված է: